ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

17. 08.2017թ. N 197-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԻ ՍՏԱՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի նիստի N 33 արձանագրության 31-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետով՝ գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից վարկի ստացման նախնական հայտերի գնահատման գործընթացը կանոնակարգելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե՝

1. Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում վարկերի ստացման նախնական հայտերի գնահատման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել.

1) Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում ստացված նախնական հայտերի գնահատման աշխատանքային խմբի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

2) Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից օգտվելու նպատակով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացվող նախնական հայտի ձևաչափը՝ համաձայն N 3 հավելվածի.

3) Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում ստացված նախնական հայտերի գնահատման չափորոշիչները՝ համաձայն N 4 հավելվածի:

Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2017թ. օգոստոսի 17-ի
N 197 - Ա հրամանի

ԿԱԶՄ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ (խմբի ղեկավար)

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ագրովերամշակման զարգացման վարչության պետ (քարտուղար)

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ագրովերամշակման զարգացման վարչության պետ ագրովերամշակման աջակցության բաժնի պետ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ճյուղային տնտեսական քաղաքականության վարչության պետ

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման վարչության պետ

«ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում վարկերի ստացման նախնական հայտում նշված Ֆինանսական կազմակերպության ներկայացուցիչ

Հավելված N 2
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2017թ. օգոստոսի 17-ի
N 197 - Ա հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում ստացված նախնական հայտերի (այսուհետ՝ նախնական հայտ) գնահատման աշխատանքային խմբի (այսուհետ՝ խումբ) գործունեության և աշխատանքների կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, այլ իրավական ակտերով և սույն աշխատակարգով:

3. Խումբը Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից օգտվելու նախնական հայտը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմում մուտքագրվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում, սույն հրամանի N 4 հավելվածով հաստատված չափորոշիչների հիման վրա գնահատում և կազմում է համապատասխան եզրակացություն:

4. Նախնական հայտի վերաբերյալ խմբի եզրակացությունը կազմվում է խմբի անդամների կողմից կատարված գնահատման արդյունքների միջին թվաբանականի հիման վրա:

5. Գնահատման ամփոփման արդյունքում 20 և ավելի միավոր ստացած նախնական հայտերի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, իսկ դրանից պակասի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն:

6. Խումբը պարբերաբար հրավիրվող իր նիստերի ընթացքում.

1) քննության է առնում և գնահատում՝

ա. տվյալ տարվա խաղողի, պտղի և բանջարեղենի մթերվող տեսականիների բերքի ակնկալվող ծավալը և որակը,

բ. պտուղբանջարեղեն և խաղող վերամշակող ընկերությունների կողմից տվյալ տարվա խաղողի, պտղի և բանջարեղենի մթերման կանխատեսվող ծավալներն, ըստ տեսականու և Հայաստանի Հանրապետության մարզերի,

գ. տվյալ տարվա խաղողի, պտղի և բանջարեղենի մթերումների կազմակերպման գործընթացում առկա խոչընդոտներն ու խնդիրները,

դ. տվյալ տարվա խաղողի, պտղի և բանջարեղենի բերքի մթերումների կազմակերպման նպատակով ագրովերամշակող ընկերությունների շրջանառու միջոցների պահանջարկը,

ե. նախորդ տարիներին կատարված խաղողի, պտղի և բանջարեղենի մթերումների դիմաց գյուղացիական տնտեսությունների նկատմամբ առկա պարտավորություններն, ըստ ընկերությունների,

զ. ագրովերամշակող ընկերությունների գյուղացիական տնտեսությունների հետ կնքված պայմանագրերի քանակը և դրանց շրջանակներում ակնկալվող մթերումների ծավալները.

2) որոշում է տվյալ տարվա խաղողի, պտղի և բանջարեղենի մթերման առաջնահերթությունները, ըստ տեսականու և Հայաստանի Հանրապետության մարզերի և(կամ) տարածաշրջանների.

3) մթերումների գործընթացի կանոնակարգման, խաղողի, պտղի և բանջարեղենի մթերման առաջնահերթությունները որոշելու նպատակով խմբի գործունեությանը կարող են ներգրավվել անհրաժեշտ մասնագետներ ու փորձագետներ.

4) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ նախնական հայտերի գնահատման չափորոշիչները վերանայելու նպատակով:

7. Աշխատանքների արդյունավետության և բազմակողմանիության ապահովման նպատակով խումբը կարող է քննության առնել գյուղատնտեսական հումքի մթերումների գործընթացի կազմակերպման միջազգային և տարածաշրջանային փորձը:

8. Խումբը կազմված է ղեկավարից, քարտուղարից և անդամներից, ովքեր աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

9. Խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են խմբի ղեկավարի կողմից, ըստ անհրաժեշտության:

10. Խմբի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են անդամների կեսից ավելին:

11. Խմբի նիստերը վարում է խմբի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ քարտուղարը կամ անդամներից մեկը:

12. Խմբի նիստի օրակարգը կազմվում և համապատասխան փաստաթղթերի հետ միասին տրամադրվում է անդամներին՝ գումարվող նիստից առնվազն 1 օր առաջ:

13. Խմբի նիստերը սկսվում են նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների ու տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին զեկուցմամբ:

14. Խմբի նիստերն արձանագրվում են, իսկ արձանագրությունը և խմբի որոշումները ստորագրում են խմբի ղեկավարը (նիստը վարողը) և քարտուղարը:

15. Խմբի նիստերին կարող է հրավիրվել նաև հայտատուն կամ լիազորված ներկայացուցիչը՝ իր կողմից ներկայացված նախնական հայտի քննարկմանը մասնակցելու նպատակով:

16. Խմբի ղեկավարը՝

1) կազմակերպում է խմբի գործունեությունը.

2) նշանակում է խմբի նիստի անցկացման օրը, ժամը, վայրը և հաստատում օրակարգը.

3) հրավիրում և վարում է նիստերը:

17. Խմբի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. խմբի նիստերի քննարկմանը ներկայացնելու հարցեր,

բ. ներկայացնելու առաջարկություններ խմբի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,

գ. ներկայացնելու խմբի որոշումների վերաբերյալ գրավոր (հատուկ) կարծիք, որը կցվում է արձանագրությանը, համարվում դրա անբաժանելի մասը և այդ մասին արձանագրության մեջ կատարվում է գրառում.

2) պարտավոր են՝

ա. մասնակցել խմբի աշխատանքներին,

բ. կատարել խմբի որոշումները և խմբի ու նրա ղեկավարի հանձնարարականները:

18. Խմբի քարտուղարը՝

1) ապահովում է խմբի նիստերի կազմակերպումը.

2) ապահովում է խմբի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.

3) ապահովում է խմբի նիստերի արձանագրության կազմումը, արձանագրությանը կցում է խմբի անդամների ներկայացրած գրավոր (հատուկ) կարծիքները, այն տրամադրում է խմբի բոլոր անդամներին և համակարգում խմբի անդամների դիտողությունների ու առաջարկությունների քննարկման և արձանագրությունների լրամշակման գործընթացը.

4) ապահովում է խմբի գործունեության մասին տեղեկատվության պարբերական տեղակայումը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքում.

5) խմբի նիստերին մասնակցում է քվեարկելու իրավունքով:

19. Խմբի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ կողմ կամ դեմ քվեարկելով, ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խմբի ղեկավարի ձայնը վճռորոշ է:

20. Խմբի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով:

Հավելված N 3
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2017թ. օգոստոսի 17-ի
N 197 - Ա հրամանի

ՁԵՎԱՉԱՓ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԻ

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից օգտվելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացվող նախնական հայտը պետք է ներկայացվի հետևյալ ձևաչափով.

Ձևաչափ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
..... ընկերության վերջին 2 տարիների տնտեսական գործունեության և սուբսիդավորվող վարկի օգտագործման ուղղությունների ու ակնկալվող վարկը տրամադրող ֆինանսական կազմակերպության մասին

Տնտեսական գործունեություն					
Հ/հ	Ցուցանիշը	Չափի միավորը	20---թ.	20---թ.	
1.	Մթերված գյուղատնտեսական հումքի ծավալը	տոննա			
2.	Մթերված գյուղատնտեսական հումքի արժեքը	մլն դրամ			
3.	Մթերված հումքի դիմաց առկա պարտավորությունը կամ պարտավորության կատարման վերջին ժամկետը	մլն դրամ			
4.	Թողարկված արտադրանք	մլն դրամ			
5.	Իրացում	մլն դրամ			
6.	Արտահանում	մլն դրամ			
7.	Արտահանման երկրներ				
20---թ. նախատեսված գործունեություն					
Հ/հ	Ցուցանիշը	Չափի միավորը	Ընդամենը	այդ թվում՝ ըստ ՀՀ մարզերի	այդ թվում՝ ըստ տեսականու
1.	2017թ. նախատեսվող գյուղատնտեսական հումքի մթերումների ծավալը, ըստ տեսականու և ՀՀ մարզերի	տոննա			
2.	Սուբսիդավորվող վարկի շրջանակներում կնքված պայմանագրերի քանակը	հատ			
3.	Պայմանագրերով նախատեսվող գյուղատնտեսական հումքի	տոննա			

	մթերումների ծավալն, ըստ տեսականու և ՀՀ մարզերի, ինչպես նաև սույն կետում նշված տեղեկատվության բացվածքը համաձայն N 1 Աղյուսակի				
4.	Պայմանագրերով նախատեսվող գյուղատնտեսական հումքի մթերման 1կգ-ի գինն, ըստ տեսականու	դրամ			
5.	2017թ. կանխատեսվող թողարկվող արտադրանքը	մլն դրամ		X	X

Ակնկալվող վարկը տրամադրող Ֆինանսական կազմակերպության անվանումը՝

Աղյուսակ N 1

Հ/հ	Պայմանագրի Վաճառող կողմը				Պայմանագրի շրջանակներում վաճառվող հումքը	
	Անվանումը կամ Անուն, Ազգանունը	Մշակվող հողատարածքի տեղակայումը			Տեսակը	Քանակը /տոննա/
		Մարզը	Համայնքը	Տարածքը /հա/		
1.						
2.						

Հավաստիացնում եմ, որ սույն գրությամբ ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ կեղծ փաստաթուղթ կամ տեղեկատվություն ներկայացնելը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Հավաստում եմ, որ Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում սույն տեղեկատվությամբ ներկայացված հումքը գնվելու է բացառապես պայմանագրերում նշված գյուղացիական տնտեսություններից, առանց միջնորդների:

Ես պարտավորվում եմ, որ իմ կողմից ներկայացված նշված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում այդ մասին կտեղեկացնեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը:

Ստորագրող

....

(պաշտոնը) (անունը, ազգանունը)

.....

(ստորագրությունը)

.... 2017թ.

Հավելված N 4
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2017թ. օգոստոսի 17-ի
N 197 - Ա հրամանի

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում ներկայացված նախնական հայտերը գնահատվում են համաձայն հետևյալ չափորոշիչների՝

1) ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տվյալ տարվա մթերումների համար սահմանված պտղի և(կամ) բանջարեղենի և(կամ) խաղողի տեսականու առաջնահերթությունների շրջանակ (8).

2) իրատեսականություն և հեռանկարայնություն (5).

3) ռիսկայնության աստիճան (5).

4) մրցակցային առավելություն (4).

5) արտահանման խթանում և (կամ) ներմուծման փոխարինում (7).

6) պատշաճ մարքեթինգային քաղաքականություն և (կամ) արտադրանքի պահանջարկի առկայություն (6).

7) համաֆինանսավորման առկայություն (սեփական կամ այլ աղբյուրներից ներգրավված շրջանառու միջոցների տրամադրում ընկերության ընթացիկ գործունեության ապահովմանը) (5):